ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի պրակտիկա անցած ուսանողների հետ հանդիպման արդյունքների վերաբերյալ

Հաշվետվություն

2018թ-ի նոյեմբերի 13-ին համաձայն ռազմավարական ծրագրի 1.3.1. կետի, այն է վեր հանել արտաքին և ներքին շահակիցների կրթական կարիքները, ԵՊՀ ԻՄ-ի Մասնագիտական կրթության որակի ապահովման (ՄԿՈԱ) բաժինը նախորդ (2017-18) ուստարում արտադրական կամ մանկավարժական պրակտիկա անցած ուսանողների, պրակտիկայի ղեկավարների և կրթական ծրագրերի ղեկավարների համար կազմակերպել էր հանդիպում-քննարկում, որին մասնակցել են նաև մասնաճյուղի դասախոսներ և տնօրենի պաշտոնակատար Ա. Ցուցուլյանը:

Հանդիպման նպատակն էր պրակտիկայի մասնակից ուսանողների, պրակտիկայի ղեկավարների և ներկաների քննարկմանը ներկայացնել բաժնի կողմից 2017-18 ուստարվա ընթացքում **<u>արտաքին և ներքին շահակիցների</u>** շրջանում անցկացված պրակտիկաների կազմակերպումից բավարարվածության հարցման արդյունքները, որոնք նախապես ուղարկված են եղել բոլոր շահագրգիռ կառույցներին՝ ուսումնասիրման և քննարկման համար: Հանդիպումը կազմակերպված էր հետևյալ օրակարգով.

1. Հանդիպման նպատակի ներկայացում:
2. Պրակտիկանտ-ուսանողների վերաբերյալ արտաքին շահակիցների կարծիքների ներկայացում և քննարկում:
3. Պրակտիկայի կազմակերպումից և բովանդակությունից ուսանողների բավարարվածության գնահատականների ներկայացում և քննարկում:
4. Պրակտիկայի կազմակերպման գործընթացի բարելավմանն ուղղված ուսանողների առաջարկներ և դրանց քննարկում:
5. Հարցում

Բաժինն այդ հանդիպումից ուներ իր ակնկալիքները.

- ներգրավել ուսանողներին պրակտիկաների կազմակերպման գործընթացներում,
- հնարավորություն տալ նրանց ներկայացնելու իրենց առաջարկները պրակտիկայի կազմակերպան գործընթացի բարելավման ուղղությամբ,
- մոտիվացնել նրանց համագործակցելու կրթական ծրագրերի պատասխանատուների և պրակտիկաների ղեկավարների հետ պրակտիկաների ծրագրերի կազմման ժամանակ,
- անկաշկանդ ներկայացնել իրենց նախասիրությունները և պատկերացումները պրակտիկաների բովանդակության և իրականացման վերաբերյալ,
- վեր հանել պրակտիկաների ընթացքում առաջացած խնդիրները:

Մասնաճյուղի ղեկավարությունն առանձնակի նշանակություն է տալիս արտաքին շահակիցների շրջանում պարբերաբար իրականացվող սոցիալական հարցումներին, որոնց արդյունքները թույլ են տալիս ժամանակին ու պատշաճորեն արձագանքել աշխատաշուկայի պահանջների դինամիկային: Վերջին հարցումն անց է կացվել 2017-18 ուստարվա ընթացքում տարբեր մասնագիտությունների ուսանողների մանկավարժական, ուսումնական և արտադրական պրակտիկաների ժամանակ: Արտաքին շահակիցները գնահատել են պրակտիկանտ-ուսանողների մասնագիտական և անձնային որակները՝ տեսական

գիտելիքները, գործնական հմտությունները, մասնագիտական խոսքը, ժամանակակից մեթոդներ կիրառելու հմտությունները, վարվեցողությունը, թիմում աշխատելու հմտությունները, նշել են մեր ուսանողների՝ ուշադրության արժանի մասնագիտական առավելությունները և թույլ կողմերը, կատարել հետաքրքիր և կարևոր առաջարկներ:

Բաժինը մշակել է հարցումների արդյունքները, կազմել համապատասխան հաշվետվություն և ուղարկել բոլոր շահագրգիռ մարմիններին՝ ՈՒսումնամեթոդական վարչության Մասնագիտական կողմնորոշման և պրակտիկաների կազմակերպման բաժին, ամբիոններին, կրթական ծրագրերի ղեկավարներին և որակի ներքին գործընթացներին աջակցող ուսանողական խմբին այդ արդյունքների քննարկման համար, որպեսզի հանդիպում-քննարկմանը նրանք ներկայանան կարծիքներով և առաջարկություններով:

Նշվեց, որ 2017-18 ուստարվա ընթացքում մասնաճյուղի առկա ուսուցման 243 և հեռակա ուսուցման 357 ուսանողներ արտադրական, մանկավարժական և ուսումնական պրակտիկա են անցել ՀՀ բնական և պատմական հուշարձանների տարածքում, հնավայրերում և թանգարաններում, Տավուշի մարզի դպրոցներում և մանկապարտեզներում, մարզի հյուրանոցներում և սպասարկման ոլորտի տարբեր օբյեկտներում, սոցիալական տարբեր ծառայություններում, Անշարժ գույքի կադաստրի Տավուշի մարզային ստորաբաժանումում, Իջևանի անտառտնտեսությունում և Դենդրոպարկում, «Քարարտ» փակ բաժնետիրական ընկերությունում, «Հույսի կամուրջ» ՀԿ Իջևանի երեխայի զարգացման և սոցիալական աջակցության կենտրոնում, Իջևանի արվեստի դպրոցում:

Հանդիպման ժամանակ շնորհանդեսի միջոցով մասնակիցներին ներկայացնելով պրակտիկանտ-ուսանողներին արտաքին շահակիցների տված գնահատականները, պրակտիկայի կազմակերպումից և բովանդակությունից ուսանողների և շրջանավարտների բավարարվածության արդյունքները, դրանց համեմատական վերլուծությունը, նաև արտաքին շահակիցների կողմից նշված ուսանողների մասնագիտական ուժեղ և թույլ կողմերը, պրակտիկայի բարելավման նպատակով կատարված նրանց առաջարկները, բաժինն ակնկալում էր, որ անմիջական շփման միջոցով այդ արդյունքների քննարկումը թույլ կտա վերհանել պրակտիկայի ընթացքում առաջացած խնդիրները, հավաքագրել պրակտիկայի իրականացման գործընթացի բարելավմանն ուղղված առաջարկներ:

3-5 տարիների համեմատությամբ ներկայացված արդյունքները, որոնք ցույց էին տալիս, որ արտաքին շահակիցների գնահատականները վերջին ուստարվա համար նվազել են, պար զ է ր , ո ր լուրջ մտահոգություն առաջացրեց հանդիպման մասնակիցների մոտ:

Ներկայացված յուրաքանչյուր արդյունքի շուրջ տեղի էր ունենում բուռն քննարկում, որին ակտիվորեն մասնակցում էին նաև ուսանողները՝ ազատ արտահայտելով իրենց տեսակետները և անհամաձայնությունը արտաքին շահակիցների տված որոշ գնահատականների վերաբերյալ:

Ապա ներկայացվեցին 2017-18 ուստարվա մայիսին բաժնի կողմից մասնաճյուղի I-III կուրսերի ուսանողների շրջանում անցկացված առցանց հարցման շրջանակներում պրակտիկայի կազմակերպման գործընթացին ուսանողների տված գնահատականները մասնաճյուղի կտրվածքով, ապա ըստ ֆակուլտետների: Որոշ գործընթացներին տված ուսանողների գնահատականները համեմատվեցին արտաքին շահակիցների տված գնահատականների հետ, որը նույնպես դարձավ բուռն քննարկման առարկա:

Հետաքրքրական էր և ուշադրություն գրավեց այն փաստը, որ արտաքին շահակիցների կողմից բարձր են գնահատվել պրակտիկանտների տեսական գիտելիքների իմացությունը՝ 4. 21 իսկ ահա ուսանողները գտել են, որ իրենց տեսական գիտելիքներն այնքան էլ չեն բավարարել ակտիվ պրակտիկայի ընթացքում՝ 3. 76: Արտաքին շահակիցները ուսանողների գործնական հմտությունները գնահատել են՝ 4. 24, իսկ ուսանողները գտել են, որ ուսումնառության ընթացքում յուրացված գործնական կարողությունները քիչ են բավարարել պրակտիկայի ժամանակ՝ գնահատելով . . . . :



Ի լրումն նշվածին փաստվեց նաև, որ բավականին շահակիցներ իրենց գրած բաց կարծիքներում վերոնշյալ հատկանիշները նույնիսկ համարել են նկատելի առավելություն:

Վերլուծելով ներկայացված արդյունքները մասնակիցներն արտահայտվեցին, որ նկատվում է **<u>ուսանողների ընդգծված դժգոհությունը</u>** պրակտիկայի ժամանակ իրենց ինքնադրսևորվելու հնարավորության պակասից, կամ մոտիվացիայի բացակայությունից, ընդունող կազմակերպության շահագրգռվածության պակասից և այլն: Ու ստացվում է այնպես, որ ուսանողներն ավելի խիստ են մոտենում կրթության մակարդակին, ինչն էլ արժանացավ հանդիպման մասնակիցների ուշադրությանը և գոհունակությանը:

Հետևաբար, լարված քննարկում տեղի ունեցավ ուսանողների կողմից պրակտիկայի կազմակերպումից և իրականացումից նրանց բավարավածությանը տված ցածր գնահատականի շուրջ (3. 71 միջին գնահատական 5 բալանոց գնահատման համակարգում), այն դեպքում երբ արտաքին շահակիցներն այդ գործընթացը գնահատել էին 4. 72 և այն վերջին տարիներին աճել էր:



Ուղղակի պետք է փաստել, որ ընդհանուր առմամբ և՛ արտաքին շահակիցների գնահատականները, և՛ ուսանողների գնահատականները միջինից բարձր են:

Հանդիպման մասնակիցների ուշադրությանը ներկայացվեցին նաև արտաքին շահակիցների կողմից թվարկված մասնաճյուղի պրակտիկանտների առավելություններն ու ուժեղ կողմերը՝ մասնավորապես առանձնացնելով այդ կարծիքներից մասնագիտական բարձր պատասխանատվությունը, պարտաճանաչությունը, աշխատասիրությունը, ուշադրությունը, լսելու ունակությունը, մասնագիտորեն ճիշտ ձևակերպված խոսքը, նորին ու առավելագույնին ձգտելու ցանկությունը, խորը գիտելիքները, մասնագիտական գրականությունից տեղին օգտվելու հմտությունները, ճիշտ և հետաքրքիր հարցադրումներ կատարելու ունակությունները, ստեղծագործական կարողությունները:

Վերոնշյալ դրական հատկանիշների հետ միասին փաստվեց, որ արտաքին շահակիցների աչքերից չեն վրիպել նաև մեր ուսանողների որոշ մասնագիտական թերություններ, որոնց բարելավման կամ փոխելու նպատակով կատարել են բավականին հետաքրքիր առաջարկներ, մասնավորապես նշելով. փորձ ձեռք բերելու նպատակով ուսանողները պետք է ավելի հաճախ ներգրավվեն տարբեր պրակտիկ աշխատանքներում, փոխեն մոտեցումները ուսման նկատմամբ և սովորեն սովորեցնելով, արդեն իսկ մտածեն լավ մանկավարժ դառնալու մասին, դրա համար ձեռք բերեն ավելի շատ գիտելիքներ ու մեթոդական հմտություններ և այլն: Իսկ այդ հատկանիշների ձեռքբերման համար արտաքին շահակիցները առաջարկում են երկարացնել պրակտիկայի տևողությունը կամ դարձնել ավելի հաճախակի, ավելի հստակ պլանավորել և կազմակերպել պրակտիկայի գործընթացը, ուսանողներին նախապատրաստել նոր մեթոդներով աշխատելուն և հետո ուղարկել պրակտիկայի վայրեր, այդ գործընթացում ներգրավել մի քանի մասնագետներ:

Ներկայացված բոլոր արդյունքների քննարկման ընթացքում մասնակիցների կողմից, իսկ ավելի շատ ուսանողների կողմից, հնչեցին պրակտիկայի գործընթացի բարելավմանն ուղղված մի շարք առաջարկներ: ***Նրանք առաջարկեցին***.

- ավելացնել հարցման մասնակից արտաքին շահակիցների քանակը՝ ավելի շատ տեղեկատվություն հավաքագրելու համար,
- հարցաթերթերում նշել պրակտիկանտ-ուսանողների մասնագիտությունները, որպեսզի գնահատականները լինեն ավելի հասցեային և ոչ ընդհանրացված բոլորի համար,
- ուսանողների հետ յուրաքանչյուր պրակտիկայի վերաբերյալ տանել բովանդակային և գործնական նախապատրաստական աշխատանքներ,
- ակտիվ համագործակցել պրակտիկայի վայրի ղեկավարների հետ՝ ուսանողների գործունեությունը ուշադրության կենտրոնում պահելու և նրանց պրակտիկայի ակտիվ գործընթացի մեջ ներառելու համար,
- դասընթացների շրջանակներում ուշադրություն դարձնել ուսանողների կողմից դասավանդման կամ մասնագիտական գործունեության ժամանակակից մեթոդների և տեղեկատվական տեխնոլոգիաների յուրացմանը:

Ներկաները միահամուռ այն կարծիքին էին, որ պրակտիկաների ղեկավարները պետք է հնարավորինս մոտիվացնեն ուսանողներին և հիմանական շեշտը դնեն գործնական հմտությունների զարգացման վրա:

Բաժինը պրակտիկայի ղեկավարներին առաջարկեց վերանայել պրակտիկաների ծրագրերը, և դրանք ձևակերպել դասընթացների փաթեթների սկզբունքով, ուշադրություն դարձնելով մասնագիտության կրթական ծրագրի և պրակտիկայի ծրագրի համադրելիությանը, հստակեցնել թեմատիկ կառուցվածքները, պահանջները, կազմել օրացուցային պլաններ և մշակել պրակտիկայից ուսանողների ձեռքբերումների գնահատման ավելի արդյունավետ չափանիշներ:

Պրակտիկայի ղեկավարները որոշեցին արդյունքները քննարկել առանձին մասնագիտությունների համար, և մշակել պրակտիկայի կազմակերպման և իրականացման ընթացակարգ, իսկ ՈՒՄՎ-ի ՄԿՊԿ բաժնին առաջարկվեց մշակել ուսումնական, մանկավարժական և արտադրական պրակտիկաների պլանավորման և իրականացման ուղեցույցներ:

Հանդիպման վերջում ներկա ուսանողների հետ անցկացվեց հարցում, որի ***նպատակն էր ուսումնասիրել ուսանողների բավարարվածությունը հանդիպումից:*** Մասնավորապես, այդ հարցումով ՄԿՈԱ բաժինը ակնկալում էր գնահատել հանդիպման արդիականությունն ու պահանջվածությունը, պարզել, թե որքանո՞վ այն հնարավորություն տվեց ներկաներին անմիջական մասնակցել քննարկումներին և բարձրաձայնել իրենց և ընկերների խնդիրները, որքանո՞վ ճիշտ ներկայացվեցին ուսանողների ակնկալիքները պրակտիկաներից և վեր հանվեցին ուսանողների խնդիրները, որքանո՞վ են ուսանողները համաձայն արտաքին շահակիցների տված գնահատականների, կարծիքների և առաջարկների հետ:

Հարցաթերթն ընդգրկում էր 6 բաց հարց, որոնք գնահատվել են 5 (գերազանց), 4 (լավ) կամ 3 (բավարար) գնահատականներով:

Հարցաթերթի բաց հարցերի միջոցով բաժինն ակնկալում էր հավաքագրել ***ներկաների առաջարկները*** պրակտիկայի բովանդակային և կազմակերպական գործընթացի հետագա բարելավման վերաբերյալ, նաև ***բացահայտել*** այն հարցերը, որոնք դուրս մնացին քննարկումից:

Հարցմանը մասնակցել են տարբեր մասնագիտությունների 12 ուսանող:

ՄԿՈԱ բաժնում կատարվել է այդ տվյալների մշակում և վերլուծություն:

Ներկայացնենք հարցման արդյունքների վերլուծությունը և դրանց համապատասխան աղյուսակները և դիագրամները հարցաթերթի բաժիններին համապատասխան՝ խմբավորված ըստ իրենց ուղղությունների:

1. Ուսանողների բավարարվածությունը հանդիպման կազմակերպումից

Գնահատմանը մասնակցած ուսանողների 92%-ը քննարկման ֆորմատից և նրա օրակարգին համապատասխանությունից բավարարվածությունը գնահատել է գերազանց և լավ, իսկ 91%-ը բավարարված է մնացել հարցերին պատասխանելու հանդիպման կազմակերպիչների պատրաստակամությունից.

	Հարցի բովանդակությունը	Գնահատական			միջ.գն	%
		3	4	5		
1.	Որքանո՞վ էր օրակարգը համապատասխանում քննարկմանը	1	0	11	4.8	92%
2.	Ինչպե՞ս կգնահատեք քննարկման ֆորմատը	1	3	8	4.6	92%
3.	Գնահատեք հանդիպում-քննարկման կազմակերպիչի մոտեցումը Ձեր հարցերին	1	3	7	4.4	91%





2. Ուսանողների բավարարվածությունը հանդիպման օգտակարությունից

Ուրախությամբ կարելի է նշել, որ հանդիպում-քննարկումը պահանջված էր, իսկ թեմատիկան՝ արդիական և բավականին խնդիրներ պարունակող: Ազատ և անկաշկանդ, ջերմ մթնոլորտն օգնեց ներկա ուսանողներին ակտիվ մասնակցել քննարկումներին: Նրանք ազատ արտահայտեցին իրենց տպավորությունները պրակտիկայից, ներկայացրեցին այն խնդիրները, որոնց հետ բախվել են պրակտիկայի ընթացքում: Ուսանողները փորձեցին իրենց տեսանկյունից մեկնաբանել արտաքին շահակիցների կարծիքները, և մատնանշել այն պատճառները, որոնք պայմանավորել են արտաքին շահակիցների տված ցածր գնահատականները և իրենց թերությունները, և ինչու 2017-18 ուստարում արտաքին շահակիցների գնահատականներն իջել են նախորդ ուստարիների նույն հարցման արդյունքների համեմատ:

Ուսանողների ակտիվ մասնակցության վառ ապացույցը հարցման ժամանակ նրանց տված գնահատականներն են.

	Հարցի բովանդակությունը	Գնահատական			միջ.գն	%
		3	4	5		
1.	Որքանո՞վ օգտակար եղավ այս հանդիպումը պրակտիկայի ընթացքում առաջացած Ձեր խնդիրների վեր հանման համար	1	3	7	**4.5**	**91%**
2.	Որքանո՞վ ստացվեց Ձեզ մոտ ազատ բարձրաձայնել Ձեր խնդիրների մասին	1	4	5	**4.8**	**90%**
3.	Որքանո՞վ եք համաձայն պրակտիկանտ-ուսանողների մասնագիտական և անձնային որակների վերաբերյալ արտաքին շահակիցների տված գնահատականների հետ	3	6	2	**3.9**	**73%**

Այն հարցին, թե որքանո՞վ նրանց մոտ ստացվեց ազատ բարձրաձայնել իրենց խնդիրների մասին, բարձր են գնահատել հարցման մասնակից ուսանողների 90%-ը, իսկ նրանց 91%-ը

գտել է, որ հանդիպման ժամանակ իսկապես վեր հանվեցին պրակտիկայի ընթացքում առաջացած իրենց խնդիրները և բավարարված են հանդիպման արդյունավետությունից:





Հատկանշական է, որ հանդիպմանը մասնակից ուսանողերն ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր իրենց անհամաձայնությունն արտահայտեցին արտաքին շահակիցների տված գնահատականներին: Հարցմանը մասնակից 12 ուսանողներից 3-ը իրենց համաձայնությունը գնահատել են բավարար («3» գնահատական), 6-ը՝ լավ, միայն 2-ն են համաձայնել արտաքին շահակիցների տված գնահատականների հետ: Ընդհանուր առմամբ ուսանողների բավարարվածությունը այդ գնահատականներից կազմել է 73%:

Հարցաթերթի բաց հարցերին ուսանողներն ակտիվ պատասխանել են, ընդ որում տպավորություն է ստեղծվել, որ նրանք անպայման ցանկանում են արտահայտել իրենց կարծիքը և աջակցել պրակտիկայի գործընթացի բարելավմանը: Նրանց կողմից կատարվել են հետևյալ առաջարկները.

- հաճախակի կազմակերպել պրակտիկաներ (6 մասնակից, որոնք հիմնականում «Սերվիս» և «Զբոսաշրջություն» կրթական ծրագրերի ուսանողներ են),
- թույլ տալ ուսանողներին պրակտիկայի ժամանակ ինքնադրսևորվել,

- պրակտիկան իրականացնել երկու դպրոցում, որպեսզի ամեն շաբաթ երկու խումբն էլ մասնակցի պրակտիկային (ՏՄՄ 3-րդ կուրս),
- ուսանողներին նախապատրաստել պրակտիկայի համար, տրամադրել նրանց հարկավոր նյութեր, ունենալ հստակ պլան (3 մասնակից),
- փոխել մոտիվացիան. կարիքի մոտիվացիայից դարձնել հնարավորության մոտիվացիա,
- երկարացնել պրակտիկայի տևողությունը:

Ուրախալի է, որ հարցման մասնակից ուսանողներն ընկալել են հանդիպման գաղափարախոսությունը և հանդիպումների արդյունավետությունը բարձրացնելու համար կատարել են մի քանի էական առաջարկություններ.

- ➢ արտաքին շահակիցների կարծիքները քննարկել առանձին ըստ ակտիվ և պասիվ պրակտիկաների, նաև ըստ առանձին մասնագիտությունների,
- ➢ քննարկել և անհրաժեշտության դեպքում վերանայել պրակտիկայի ղեկավարի գործառույթները և նաև դրանց արդյունավետությունը,
- ➢ հանդիպումների ժամանակ ներկայացնել նաև ձեռնարկված համարժեք քայլերի մասին («. . . քիչ խոսեք, շատ գործեք»):

Ամփոփելով նշենք, որ պրակտիկայի բարելավման նպատակով արտաքին շահակիցների կողմից կատարված առաջարկները նույնպես մեծամասամբ ուղղված էին պրակտիկաների իրականացման հաճախականությանը, պրակտիկային ուսանողների համարժեք պատրաստվածությանը, հստակ պլանի առկայությանը:

Ընդհանրացնելով հանդիպումից ձեռք բերված արդյունքները ՄԿՈԱ բաժինը որոշեց.

- ✓ պրակտիկայի կազմակերպման գործընթացին վերաբերող բոլոր ուսումնասիրությունների արդյունքները ևս մեկ անգամ տրամադրել բոլոր ամբիոններին, կրթական ծրագրերի ղեկավարներին և ՈՒՄՎ ՄԿՊԿ բաժնին,
- ✓ առաջարկել պրակտիկայի ղեկավարներին մշակել ուսանողներին պրակտիկաների մեջ ներգրավելու ավելի արդյունավետ մոտեցումներ, և հետևողական լինել պրակտիկայի արդյունավետ իրականացման գործընթացի նկատմամբ, մասնավորապես ապահովել ուսանողների ակտիվ մասնակցությունը պրակտիկային, այսինքն ստեղծել պայմաններ նրանց գործնական հմտությունների կիրառման և դրսևորման համար,
- ✓ ուսանողներին նախապատրաստել պրակտիկային և ունենալ նրա իրականացման հստակ թեմատիկ և օրացուցային պլաններ:

ԵՊՀ ԻՄ մասնագիտական կրթության ապահովման բաժին